ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթական ծրագիրը նոր մագիստրոսական ծրագիր է, որի նպատակը նորարարական և ստեղծագործական մտածողությամբ և կիրառական մասնագիտական կարողություններով օժտված մրցունակ մասնագետների պատրաստումն է, որոնք ի վիճակի կլինեն բարդ ու լարված շուկայական մրցակցության պայմաններում լուծել բիզնեսի զարգացման ու տեխնոլոգիական արդիականացան, ինչպես նաև նոր, մրցունակ պրոդուկտների ստեղծման ու շուկայական առաջմղման հետ կապված կառավարման բարդ խնդիրներ:

Ծրագրի տևողությունը
1.5 տարի

Դասապրոցեսը
շաբաթական 3 անգամ
18:00-ից հետո

Ուսման վճարը (տարեկան)
700.000 ՀՀ դրամ

Որակավորում
տնտեսագիտության մագիստրոս



ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կիսամյակ

1. Էկոնոմետրիկա և տվյալների վերլուծություն
2. Գաղափարից դեպի շուկա. նորույթներ և առևտրայնացում
3. Նորարարական համակարգեր և կլաստերներ
4. Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտություն
5. Հետազոտական փորձառություն
6. Նորարարական ձեռնարկատիրություն
7. Նորարարական փոփոխությունների կառավարում
8. Նորարարական բիզնես մոդելներ և գործընթացներ
9. Նորարարությունների ֆինանսավորում
10. Տեխնոլոգիաների միջազգային փոխանցում

երրորդ կիսամյակ

Գիտահետազոտական փորձառություն
(տևողությունը՝ 10 շաբաթ)

երկրորդ կիսամյակ

1. Ինվացիոն նախագծերի դիզայն. փակ և բաց ինովացիաներ
2. Ցանցային պրոդուկտներ և արժեշղթաներ
3. Ստարտափ ընկերությունների զարգացում և առևտրայնացում
4. Էվոլյուցիոն մակրոէկոնոմիկա
5. Տեխնոլոգիական աուդիտ և մտավոր սեփականության փոխանցում /ընտրովի դասընթաց/
6. Մտավոր սեփականության և զարգացման կառավարում
7. Կրիպտոէկոնոմիկա և բլոկչեյն տեխնոլոգիաներ /ընտրովի դասընթաց/
8. Նորարարական քաղաքականություն

Գիտամանկավարժական փորձառություն
(տևողությունը՝ 6 շաբաթ)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Ատոմ Մարգարյան
Կրթական ծրագրի ղեկավար
LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ՀՊՏՀ համահամալսարանական «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար (2017թ, մինչ այժմ), տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր(համատեղությամբ): ՀՀ և արտասահմանյան մի շարք համալսարաններում դասախոսական և գիտահետազոտական աշխատանքի 44 տարվա փորձառություն: 2011-2017թթ. հանդիսացել է ՀՊՏՀ Տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետր դեկանը: Հեղինակ է 140 գիտական հրապարակումների, ուսունական և ուսումնաօժանդակ ձեռնարկների, իրականացրել է մեկ տասնյակ դրամաշնորհային գիտահետազոտական ծրագրեր, որպես զեկուցող մասնակցել է երեք տասնյակ միջազգային գիտաժողովների ու սիմպոզիումների: ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեի ամենամյա «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի քառակի հաղթող է: Նորարարությունների ոլորտին առընչվող տարբեր միջազգային հետազոտական և կրթական ծրագրեր է իրականացրել Գերմանիայի Աուգզբուրգ, Յենա, Շտուտգարտ քաղաքների, Ռուսաստանի (Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ), Բելառուսի (Մինսկ) շուրջ մեկ տասնյակ համալսարանների հետ: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Եվրասիա հիմնադրամի ազգային փորձագետ է:

Նելլի Շահնազարյան
LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: 2020 թվականից առ այսօր՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի «Գործարար վարչարարություն» մագիստրոսական ծրագրի ղեկավար: 2010-2018 թթ.՝ ՀՊՏՀ հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի վարիչ: 2002 -2010 թթ.՝ ՀՊՏՀ կառավարման ամբիոն, դոցենտ: 1987-1994 թթ.՝ Երևանի պետական բժշկական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնի դասախոս:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Դավիթ Մելիքսեթյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Իննովացիաների կառավարման մասնագետ: ՀՊՏՀ և Մոսկվայի «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց» ազգային հետազոտական համալսարանի (ВШЭ) դասախոս: 2010 թ.-ին հիմնադրել է և մինչ օրս կառավարում է «Մելիք թեքնոլոջիս» ընկերությունը: 2015 թ.-ից «Ֆրիվեյ Ֆայնանս» խորհրդատվական ընկերության մարկետինգային տնօրեն: 2022 թ.-ին հիմնադրել է «Արվեստի Դեսպանատուն» պատկերասրահը:

Ծովինար Կարապետյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Հիմնադրման օրից աշխատում է ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնում: Վարում է դասընթացներ բակալավրիատում և մագիստրատուրայում: Իրականացնում է ակտիվ գիտաուսումնական և գիտահետազոտական գործունեություն: Մասնակցում է միջազգային գիտաժողովների, սեմինարների, համաժողովների, որակավորման բարձրացման բազմաթիվ ծրագրերի: Հիմնել և ղեկավարում է «Նորամուծություն և կրթություն» ՀԿ-ն: Նրա ասպիրանտներից հինգը դարձել են տնտեսագիտության թեկնածուներ:

Հարություն Թերզյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» ԳՈՒԼ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու: 2015-2017թթ՝ ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետի դեկանի տեղակալ: 2012-2017թթ. և 2021թ՝ ՀՊՏՀ, դասախոս: 2010-2014թթ՝ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, ավագ գիտաշխատող: Հեղինակ է չորս տասնյակ գիտական հրապարակումների:

Անի Հունանյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Ասիստենտ, ավարտել է ՀՊՏՀ Մակրոտնտեսագիտության ամբիոնի ասպիրանտուրան: ՀՀ ֆինանսների նախարարության խորհրդական է: Մասնագիտական աշխատանքի փորձ է ունեցել նաև ՀՀ վարչապետի աշխատակազմում, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում և մի շարք այլ նախագծերում: Եղել է ՀՊՏՀ-ի «Ազգային ինովացիոն համակարգ», ԳՊԿ-ի «Կիրառական նշանակության գիտահետազոտական մշակումների արտոնագրման և առևտրայնացման հիմնախնդիրները ՀՀ-ում» և այլ հետազոտական խմբերի անդամ:Ունի մասնագիտական վերապատրաստման, միջազգային և տեղական համաժողովների, գիտաժողովների և ծրագրերի մասնակցության շուրջ 20 վկայական:

Լարիսա Ավետիսյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ: Հայաստանի Գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST foundation) ծրագրերի ղեկավարն է: Ավարտել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտուրան /2016թ./ և Մեծ Բրիտանիայի Մանչեստրի համալսարանի մագիստրատուրան (2014թ).: ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և TEMPUS-իազգային փորձագետ է:



Էմիլ Գրիգորյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Տնտեսագիտության թեկնածու, 2019-2023թթ. «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» լաբորատորիայի գիտաշխատող: 2023 թվականից ՀՊՏՀ բիզնես վարչարարության ամբիոնի դասախոս: Մեկ տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորարարությունների տնտեսագիտություն կրթական ծրագրի շրջանավարտները կարող են նորարարությունների ու փոփոխությունների կառավարման մասնագետի պաշտոններ զբաղեցնել պետական հաստատություններում, տնտեսագետ-վերլուծաբանի, տնտեսագիտական հարցերով խորհրդատուի, զարգացման և բիզնեսի աճի գծով փորձագետի, հետազոտողի, կորպորատիվ վերլուծությունների մասնագետի պաշտոններ զբաղեցնել տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում, արտադրական ձեռնարկություններում, կապի, հեռահաղորդակցությունների, ծառայությունների, շինարարության ոլորտի ընկերություններում, խորհրդատվական կազմակերպություններում, բիզնես ինկուբատորներում, գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներում, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններում, ստարտափ ընկերություններում, պետական և մասնավոր վերլուծական կենտրոններում, ակադեմիական և այլ հետազոտական հաստատություններում, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում:

Ողջույն, **ես Վահանն եմ**:

Ավարտել եմ ՀՊՏՀ «ՏԿ և ՄՏՀ» ֆակուլտետի բակալավրիատը, այնուհետև՝ ՀՊՏՀ «Նորարարությունների տնտեսագիտություն» մագիստրոսական կրթական ծրագիրը: Ծրագիրը իրականացվում էր առաջին անգամ, որն էլ իր նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացրեց: Ուրախ եմ, որ առաջիններից մեկն եմ, ով յուրացրել է այս կրթական ծրագիրը, քանի որ այն հնարավորություն տվեց բացահայտել նորարարությունների դերը տնտեսության զարգացման մեջ, դրանց բազմապլան կիրառությունները և ոչ միայն: Այս յուրօրինակ կրթական ծրագիրը սովորեցրեց նաև ցանկացած աշխատանք կատարելիս մտածել և գործել ստեղծագործ կերպով՝ որպես նորարար: Այս տրամաբանությամբ էլ աշխատում եմ Big Projects **ընկերությունում որպես Թվային մարքեթինգի մասնագետ**:

Ես Անահիտն եմ:

Ավարտել եմ ՀՊՏՀ ՏԿ և ՄՏՀ ֆակուլտետը տնտեսագիտություն մասնագիտությամբ: Հանդիսանալով «Նորարարությունների տնտեսագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի առաջին շրջանավարտներից, կարող եմ վստահեցնել, որ կրթական ծրագիրը հիանալի ընտրություն է ոչ միայն տնտեսագետի, այլև յուրաքանչյուր այլ ոլորտի մասնագետի համար, քանի որ նորարարությունն ու զարգացումը պահանջված են ամենուրեք: Ծրագիրը ուսանողի մոտ զարգացնում է ստեղծագործական մտածողությունն ու վերլուծական հմտությունները, ինչը հնարավորություն ընձեռում ամեն օր փոփոխվող աշխարհում առկա մարտահրավերների կառավարման նպատակով գտնել նորարարական լուծումներ: